Ինչպէս կը տեսնենք այս նամակէն, զմմառեան առաջարկի մասին՝ Մխիթար առ Յակոբ Եպիսկոպոս գրած թուղթէն զատ՝ ուղղակի եւս պատասխանած է ըստ պատշաճողութեան առ նոյն ինքն Պատրիարք. դժբախտաբար մեր ձեռքը չունինք այդ թուղթին օրինակը։

Գերյարգելի և գերապատուելի տերութեան ձերում խոնարհաբար և որդիական սիրով ողջոյն

. . . Պատրիարգին ամենայն էհվալին տեղեկացայ եւոյ մի ըստ միոջէ ծանուցից հրամանուցդ. վասն յաժմոյս այս ասեմ, որ մին քանի քարտինալի գնաց որոց անձնա-[բա]բական գիրեր բերած, սիրով ընկալան գնա ըստ ֆռանկի քաղաքավարութեան. եւոյ փափին գնաց. փափն քան զամմէնն առաւել սիրով ընկալաւ գնա, խոսք տվաւ թէ ամենայն խնդիրքն կատարէ, որով յոյժ մխիթարեալ դարձաւ ի տուն. մինչեւ յաժմս իւրեան պալատէն փառթ չի տվին, ինքն ոչ խնդրեց, բայց եթէ նոքայ տան [յ]օժառ է առնելու։

Հրամանուցդ գիրն ընկալաւ և առաջի իմ ընդերձաւ ասելով, թէ ես նախնէ գիտէի որ Հայր Աբբան այս բանն չեր ընդուներ. բայց վասն հաճելոյ իմ կրօնաւորաց ես եւս ընդ նոցայ ձեռք դրի գրոյն։ ...

Պատկերներն պատրաստի եմ, այսինքն սուրբ ովսէփայ և սուրբ Պէնէտիքտոսի. առաջին եկողի հետ ուղարկեմ. վերստին խնդրեմ հայրական գթութեամբ թողութիւն անես այս-չափ երկարելոյն։

Վ.ղանէս եպիսկոպոսն սիրով և յարգութեամբ ողջոյն մատուցանէ հրամանուցդ. վերջ առնեմ խնդրելով զհայրական օրհնութիւնն գերյարգելութեան ձերում, որոյ խոնարհագոյն որդի և

Ամի տեառն 1742 Ծառայ
սեպտեմբերի 7 [Հռովմ] [պատկերահան] Յոհաննէս

ՃԺԱ.

Թանկագին ու կարևորագոյն նամակներուն շարքը առաջ կը տանի Յովհաննէս պատկերահան, հետզհետէ տալով Հռովմէն մանրամասն տեղեկութիւններ՝ հոն ժամանող Պետրոս Կաթողիկոսին նկատմամբ։

Նախ կը հաղորդէ ինչ որ կրցեր է իմանալ կաթողիկոսական անդրանիկ ընտրութեան և անոր յարակից դէպքերուն շուրջ, ապա կը նշանակէ Հռովմ ուղեւորուելուն շարժառիթը, նպատակն ու գտած սիրալիր ընդունելութիւնները թէ՛ Քահանայապետէն[1] և թէ Ծիրանաւորներէն։

Մեր վաւերաթուղթը բացառիկ կարևորութիւն մ'ալ կը ստանայ, որովհետեւ հայ եկեղեցական պատմութեան կ'ընծայէ նշանակելի հետաքրքրական դէպք մը։ Քահանայապետական ունկնդրութենէն քանի մ'օր վերջ կը տկարանայ Աբրահամ կաթողիկոս. հիւանդութեան լուրը կը հասնի Սրբազան Հօր, որ այցելութեան կը փութայ երկու Ծիրանաւորներով միասին։ Առաքելական պալատ դառնալէ վերջն ալ՝ ի նշան հայրական հոգածութեան՝ առանձին հրահանգ մը կու տայ հիւանդին մասին։

Աբրահամ կաթողիկոս այն ինչ կը գտնէ առողջութիւնը՝ մանաւոր ունկնդրութեամբ մը անձամբ կը ներկայացնէ երախտագիտական զգացումները։

---

1. Բենեդիկտոս ԺԴ։